ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Սամվել Խանվելյան, Պետական պարտքի կառավարման վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Վուզեն (Չինաստան), 2024թ մայիսի 27-ից մինչև մայիսի 31-ը ներառյալ
3. **Հրավիրող կողմը՝** Ասիական Զարգացման Բանկ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն Պետական պարտքի կառավարման ասիական տարածաշրջանային տարեկան համաժողովին:

5. **Քննարկված թեմաները.**

- Համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական զարգացումները,
- Պարտքի արդյունավետ կառավարումը ներկա մակրոտնտեսական իրավիճակում,
- Կանաչ տնտեսությանը, ինչպես նաև «Բնապահպանական, սոցիալական և կառավարման» շրջանակին անցման ֆինանսական կարիքների բավարարումը,
- Պարտքի կառավարման, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացումը,
- Ներքին պարտքի շուկայի զարգացումները,
- Պարտքի կառավարման մարտահրավերները ֆինանսական մեծ կարիքների առաջացման ժամանակ,
- Ներդրողների հետ փոխհարաբերությունները,
- Պարտքի կառավարման մարտահրավերները փոքր երկրներում,
- Տեխնոլոգիական համակարգերի և նորարարությունների միտումները պարտքի կառավարման մեջ,
- Կանխիկ հոսքերի և իրացվելիության կառավարման խնդիրները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ընդհանուր առմամբ համաժողովին ներկա են գտնվել տարածաշրջանի 27 երկրների բազմաթիվ մասնակիցներ, տարբեր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովը կազմակերպվել է հիմնականում սահիկաշար ներկայացնելու մեթոդով, իրականացվել է նաև խմբային աշխատանք: Ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ հարց ու պատասխանի ձևաչափով: Երկրների ներկայացուցիչները ներկայացրել են տարբեր ասպեկտներում իրենց պարտքի կառավարման փորձը՝ հաջողություններն ու ձեռքբերումները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել: Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների հետ քննարկել եմ ԱԶԲ հետ համագործակցության ընդլայնման հնարավորությունները, մասնավորապես ածանցյալ գործիքների և դրանց կիրառության վերաբերյալ օժանդակությունը, ԱԶԲ կողմից դրամային պարտատոմսերի թողարկման հեռանկարները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել քննարկումներն առցանց ձևաչափով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

04 հունիսի, 2024թ.